


ՏԻՐ ԵՒ ՏՆՈՒՄԷՆ

Ե. ԹՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ որևէ գրութիւն պետք է ուղղել աս Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ րազրի ԳԱՇԻՐԷ (Երևան/Երասրի) Թիւ.

E. TOROSSIAN
Direc. propr. du journal arménien
ARCHALOUICE
LE CAIRE (EGYPTE)
Boite Postale No.



ՐԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Table with subscription rates: ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ, Տարեկան ողջ դահլիճ 60, Կեցանկեսայ 35, ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ, Տարեկան Թրակի 20, Կեցանկեսայ 12

ՐԱՃԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՆԻԿ Եւ թղթատարի ծախքը Խոնքագրութեան վրայ է:

Խոնքագրութեան ուղղուած Գրութիւնի և չ'են տրուիր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ Կանխիկ վճարելի են

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԹԵՔԻՐՏԱՂՅԻ

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱԶԳԱՅԻՆՈՅ

(ՄՐՏԱՅՈՅՁ ԵՐԱԶԸ)

Ստուգութիւնը չենք երաշխաւորեր, բայց դարմանօք լսեցինք որ Թէքիրտաղի ժողովուրդը նկատելով որ, Յովսէփ Վարդապետ Այվազեան նոյն իսկ Թէքիրտաղցոց 200 ոսկի ծախքովը եպիսկոպոս եղաւ, ըսել է ըստ մեր եկեղեցւոյ սովորութեան կամ պայմանի, ինքզինքը ցմահ ծախած է Թէքիրտաղի եկեղեցւոյն ճիշտ այնպէս, ինչպէս մէկը վաճառատեղիէն ստրուկ մը կը գնէ ցմահ ծառայեցնելու համար. ինչպէս այս պարագային մէջ ստրուկը իրաւունք չ'ունի ցմահ ծառայելու ստրկութենէն հրաժարել եթէ իւր տէրը բարեարտութեամբ չ'արձակէ զինքը, այսպէս ալ եկեղեցւոյ ծախքերով Եպիսկոպոս ձեռնադրեալ կղերական մը իրաւունք չ'ունի նոյն եկեղեցին թողնելու որչի եկեղեցի մը երթալու, մինչև որ ժողովուրդը իրմէ դժգոհելով կամ արդարացուցիչ պատճառով հեռանալու թողտուութիւն չ'ընէ:

Այս տեսակ վարմունք յանուն Աստուծոյ յանուն նուիրական պաշտօնավարութեան ծայրայեղ խաբեարտութիւն մէ, և մեծ նախատինք Աստուծոյ ներկայացուցիչ ըլլալու. Աստուած բովանդակապէս ճշմարտութիւն ըլլալով, չ'կրնար ըլլալ որ իւր պաշտօնեայն խաբեարտ ըլլայ. այսպիսին Աստուծոյ պաշտօնեայն չ'է, այլ կղերական անձնաւորութեան նենդեալը:

Իրաւ այսպէս կը խորհին Հայաստանեայց եկեղեցւոյն օրինացն և աւանդութեանց նախանձանդիւր Թէքիրտաղցիք: Բայց պէտք է գիտնան որ երբ այվազին սղան Յովսէփ էր, պարզ մարդ մ'էր. թեքրեւս ընաւ արժէք չ'ունեցող մը. երբ Հրեովմէական եկեղեցին ձգեց և իբր վարդապետ Հայոց եկեղեցին եկաւ, պարզ արեղայ մ'էր, իսկ երբ մեր սիրեցեալ Հայրիկի եկեղեցական աստիճանաբար խաբեարտ աստաբարուղի շնորհիւ Եպիսկոպոս եղաւ, ալ ազատ էր. կարծես Խորմեան Քահանայապետը պիտի կրնին պէյլիկի պէյլիկ տիր» ըսելով առանց դատողներուն արստաւոր անցեալը նկատողութեան առնելու ամենն ալ Եպիսկոպոս ձեռնադրեց, կ'երեթ թէ մէկուն միւսին խաղաղ չ'մնալու համար:

Ի՞նչ աժան եպիսկոպոսութիւն. եթէ ուտելիք ըլլար, արգեօք որչափ աղքատներ գիւրութեամբ պիտի կերակրուէին: Եթէ եկեղեցւոյ լիազօր փոխանորդութիւնը այսչափ աժան ծախենք, կ'աղաչենք, ցըցուցէք մեր եկեղեցւոյ մէջ ո՞րն է սուղը, լուսարարութիւնը թէ ժամկուտութիւնը. այժմ կը թողում այս մեղադրանքը և կ'ուզամ ըմբոստութեամբ ըսել. եկեղեցին եկեղեցականինն է. Եպիսկոպոսը եկեղեցւոյ պետ մ'է. ո՞վ է դձուճ ժողովուրդը, ո՞ր պիտի յանդգնի եպիսկոպոսի մը Աստուծաժաշունչ արարքներուն խառնուելու. ասոնք այն անգութ էրկիններուն կը նմանին, որ շարունակ կ'իկնին կը ծեծեն:

Կ'ըսեն թէ ժողովուրդը տգէտ է. այս տգէտ է. վասն զի չ'գիտեր թէ՛ պարզ մարդ մը երբ եկեղեցական սքեմ կը հագնի, այլևս պարզ մարդ չ'է, այլ երկնային պաշտօնեայ մը, հրեշտակ մը ըսէ կը լիննայ, կ'երթայ. որ իշխանութիւն ունի կապելու և արձակելու, որուն գործնական փորձը վերջերս Փայաւաններու երկրին մէջ տեսնեք. փորձ մը՝ որ մարգավայել դիւցաշնութեամբ մարմնացաւ:

Ուրեմն ժողովուրդ, մոռցի՛ր քո իրաւունքը, լու՛է՛ քո կղերին ամեն արարքներուն առջև ինչ որ ըլլայ եթէ չ'ես ուզեր երկրային և երկնային պատիժներու ենթարկել:

Ըսել է Եպիսկոպոսի կամ Կղերի նշանաբանն է քէյֆ պէնիմ, քէօյ Մեհմէտ աղան» ուստի մենք Մեհմէտ աղայի շրջանակին մէջ գործ չ'ունինք ուրեմն:

Ս. Ֆ.

Ն Ա Մ Ա Կ Կ Ի Պ Ր Ո Ս Է Ն

(Արշարայի աշխատակից ՄԱՌԻ ԿԵՆ)

Յիրաւի բոլորովին հրապոյրէ զուրկ չէ սա խեղճ Կիպրոսը... Միջերկրականի սա պարզուկ աղջիկը, որ արհամարհելով կամ աւելի ձիշտը ամօթ սեպելով քաղաքակրթեալ երկիրներու սրուեստական գարգն ու զարգարանքը, լիբր ու լպիւր չ'պարբ, պարկեշտօրէն, իր լեռներուն ու դաշտերուն սղա՛ր կանաչը լաչակ ձգած գլխուն՝ լուրջ ու համեստ կը նստի իր մօրկանը թեւերուն տակ... Նա՛ պարահանգէս չ'գիտեր բնաւ. թատրոն՝ հազիւ երբեմն տեսած է. իսկ խաղատուն, քաֆէ-շանթան, կամ ասոնց նման ուրիշ անբարոյական դրօսատեղիներ բնաւ երբէք չ'ձանչեր. Արդէն քաղաքակրթեալ

աշխարհներու հնարած այս հրապուրիչ դժուրները չ'են որ եօթը մահացու մեղքերու տակ կը ձգեն հանուր մարդկութեան գրեթէ մեծամասնութիւնը:

Չէ՛, Կիպրոսը՝ միջերկրականի կողքին գամուած այս խոշոր գմբուխտը, ասոնք չ'ունի... Իր բնակիչներն ալ մեծաւ մասամբ մարտեր, պարկեշտ, պարզապէ՛ր ու աշխատասէր մարդիկներ են, թէպէտ քիչ մը չ'ափազանցօրէն սիրահար Բագոսին Ասոր ալ պատճառը երկրին արտադրած ընտիր և առա՛տ գինին է... միակ պերճանքն ու զեղխութիւնը՝ զոր Կիպրոս կը ներէ իր զաւակներուն... Քաղաքակրթ աշխարհին բոլորովին անծանօթ, Կիպրացին՝ անոր գարեջներուն ու մոլորութիւններուն վրայ ալ գաղափար չ'ունի. գուցէ հաւատացած ալ է թէ՛ Կիպրոսէն զուրօ՛ ուրիշ լաւագոյն աշխարհ գոյութիւն չ'ունի բնաւ. Նա՛ երկրագործ է, կը հերկէ, կը ցանէ, կը քաղէ, Աստուծոյ առ նախնական մարդն տուած անէճքին խոնարհարար համակերպած՝ իր ձակաին քրտինքովը իր հացը կուտէ:

Կղզւոյն ամեն կողմերը կը տեսնես մշակուած դաշտեր, պարարտ արտոներ, խոտմնալից այգիներ... Երկար լեռնաշղթայ մը վայելչապէս կը զրկէ կղզին. Լեռներէն ոմանք բաւական բարձր են, նա՛մասաւանդ Թոթոսը, որոյ վրայ ձմեռ ամառ ձիւնը միշտ կայ ու կը մնայ. Սպիտակ, վե՛հ ամպեր, խորհրդաւոր ծալքերով ծանրօրէն նստած անոնց գաղաթին՝ մտքով ու հոգւով կը վերացնեն զմարդ հեռուն... կապոյտ միջոցին մէջ... դէպ ի անծանօթ, դէպ ի նոր երկնագաւառներ՝ ուր թերեւս աւելի՛ անուշ ըլլայ ապրիւր:

Խիստ գեղեցիկ է բնութիւնը... ամեն կողմ փայլուն կանաչ, որ գիտողին աչքերը կը յանկուցանեն, և սրամազրութիւնը որքան խիտ ու դաժան ըլլայ, դէպ ի լաւն, դէպ ի զուարթը կը փոխեն:

Կիպրոս պատմական վայրեր ալ ունի, մանաւանդ մեղ, հայերու համար շատ իսկ հետաքրքրելի... Նիքոսիաի մէջ կը տեսնենք Թորոս Լեռնի պալատին աւերակները, ուր փռված պատերուն վրայ գեռ կ'երեւայ Ռուբինեանց իշխաններուն զինանշանը:

Չորս - հինգ ժամ հեռուն, Ս. Մակարայ վանքը, ուր իջած էր Թորոս... Հնա՛ արդէն Կիլիկիոյ հովերը կը փչեն... և հեռուն, ծովէն անդին, կարծես մշուշի մէջէն կ'երեւի ժայռուտ Տօրօսը, որ իւր յաղթ հասակը հպարտութեամբ տնկած, ամպերուն հետ թարբւ կը զրկէ մեզ...:

Տեսակ մը գուրգուրանքով ոտք կոխեցի Կիպրոս: Առաջին գործս եղաւ հետաքրքրուել տեղացի հայ ժողովուրդի կեանքով: Դասն յուսախարութիւն մը կրեցի սակայն, տեսնելով որ, հայրենիքի այնքան մօտիկ երկրի մը հայ բնակիչները որքան սրտով հեռու են անորմէ...:

Իրեթէ ամենքն ալ թրքախօս են: Նա, աւելացի ըլլալով՝ միայն Կիլիկիեան ընտանիքը տեսայ, որ իր ազգութեան գիտակցութիւնը կատարելապէս ըմբռնած ըլլայ, անոր լիզուն

յարգէ ու պահէ, ջերմագէս պաշտէ հայութիւնը եւ այդ սկզբունքով դաստիարակէ իր զաւակները, իսկ նոր սերունդը թրքախօս ծնողներու մասող զաւակները, բարեբաղդարար մարտը հայերէն կը խօսին, ինչ որ քաղցր միտքաբարձութիւն մը եղաւ ինծի... Այս բարեբաղդարարութիւնը Ազգ. վարժարանի ուսուցիչ Պարոն Յարութիւն Առատուբեանի, որ սարկներէ ի վեր աքնած է, ու կը տքնի ցայտօր, խեղճուկ, նեղ, եւ վարժարան կոչուելու բոլորովին անյարմար խցիկի մը մէջ, Կիպրոսի հայ մանկուստան կըրթութեանն ու դաստիարակութեանն համար:

Արդարեւ մեծ գործ է բոլորովին թրքախօս մանուկներու սովորեցնել իրենց մայրենի քաղցր բարբառը... ճանչցնել անոնց թէ՛ լեզու մը ունին իրենց սեփական... հայերէն շեզուն՝ զոր պարտին խօսել եւ սիրել: Կ'աշխատի չարաչար երկաստարգ ուսուցիչը, եւ իր հանգստին համար յատկացուած սուղ ժամերնայ կը նուիրէ եկեղեցական երգեցողութեան:

Ազգ. վարժարաններուն մասն յաջոյց յատկացուած շէնքին ճակատը կը կարգանք, «Չանիւք եւ աշխատութեամբ Տէր Յովհաննէս» քահանայի Շահինեան» եւ եկեղեցւոյ բակին մէջ Առաջնորդարանին դրանն առջեւ կը տեսնենք վայելուչ աղբիւր մը, որ քարէ ձուկի մը բերնով՝ արծաթէ պաղուկ ալիքներ կը վազցնէ... եւ ամբան սաստիկ տաքուն մանուսանդ, կը զովացնէ մէկէ աւելի յոգնած, քրտնած ճակատներ եւ պայպակած բերաններ...:

Ինչպէս կ'երեւնայ արդէն վերելքի շնորհաւորութեանն վարժարանի նորոգութեան ու շինութեան մասին, մեծ գեր ունեցեր է Կիպրոսի Նոգուար հովիւ. Տէր Յովհաննէս քահանան, եւ ինչպէս կ'իմանամ անպակի գծուարութիւններու եւ արգելքներու բաղխած է: Վասն զի ժողովուրդը հասարակական կրթութեան օգուտները հասկնալու բացարձակապէս անկարող մշտա, խեղ, յամառ, հազիւ հազ այս գործին համար իրեն բաժին ինկած լուստն ստուռ յանձնատու եղած է: Մեր աչքին առջեւ ի հարկէ շատ կը բարձրանայ քարեհամրոյր քահանային այս ձեռնարկը. քանի որ անոր շնորհիւ թէպէտ պզտիկ, թէպէտ խեղճ, թէպէտ անյարմար, եւ սակայն այսու ամենայնիւ վարժարան անուան տակ յարկի մը գոյութիւնը պահպանուած է վերջապէս, ուր Կիպրացի հայ մանկտին փողոցները թափառելէ ազատած, եկեր գէթ իր մայրենի բարբառը սովորէ...: Չմոռնա՛մ բոն թէ՛ վերելքի շնորհաւոր շինութեանն ալ ինքը ձեռնարկած է:

Կիպրոսի մէջ, իրբեւ կրթական լուրջ հաստատութիւն մը կրնանք նկատել Ազգ. Կրթարան-Որբանոցը: Հոս ի հարկէ չպիտի ծանրանամ թէ որքան մեծ, գեղեցիկ եւ արդիւնաւոր է Պարոն Վահան Քիւրքճեանի այս գործը: Ամեն անոնք որ քիչ շատ խելք ու գասողութիւն ունին՝ կրնան ըմբռնել ստիկայ:

Պարոն եւ Տիկին Քիւրքճեան երկուքն ալ նուիրուած են գործին ամբողջ հոգեով: Տիկինը իր հարազատ զաւակներուն պէս կը գործընթաց ու հոգ կը աննի խեղճ որբիկներուն վրայ, որոնք լուրջ եւ ամուր բարոյական ուղղութիւնէ մը առաջնորդուած կը պատրաստուին կեանքի պայքարին...:

Յաջորդ թղթակցութեամբս խոստանալով աւելի երկար ու մանրամասն գրել Որբանոցի ներքին կեանքին, այս անգամ կը բաւականանամ անոր մէկ համառօտ նկարագրելը սալով ընթերցողին: Կրթարան-Որբանոցի կարգն ու կանոնը, ներքին ու արտաքին վիճակը, իր նիւթական միջոցներուն ներածէն շատ աւելի է կարելի է ըսել: Մարդուն սիրտը սեռակ մը հրճուանքով ու միտքաբարձութեամբ կը իայտայ, երբ կը տեսնէ անցեալ սեւ օրերու չարաչար պատանարներէ ազատուած այդ խեղճուկ աղաքը, մտքուր հոգուած ամենքն ալ միտքիսակ, քաղաքավար ու պարկեշտ, հանգարտ ու երջանիկ իրենց վարժարանական կեանքին մէջ, գորովա-

զուժ հօր մը եւ սիրասուն մօր մը աչալուրջ խնամքներուն տակ:

Որբանոցին ուսման ծրագրը տարրակուսէն անդին չանցնիր սակայն, գէթ առ այժմ: Պէտք է ըսել որ աւելի սրտի մարդիկներ կը պատրաստուին հոգ՝ քան թէ մտքի ու գործի:

Արուեստ կը սովորին, սակայն կատարելութեան չեն կրնար հասցնել քայն. այնպէս որ մարդ ինքնին կը պարտաւորի հարցնել շատ անգամ. «Եթէ այս սուղ օր մը վարժարանը թողուն, ի՞նչ պիտի ընեն...» Եթէ արուեստաւոր մնալ ուզեն, արուեստը կատարեալ չեն մշակած. եւ մինչեւ որ վարպետի մը մօտ ուզեն սովորել պէտք է սպրիլ: Ի՞նչպէս...: Եւ ի՞նչ միջոցներով սակայն պիտի սպրին մինչեւ այդ ժամանակ աղքատ եւ անուէր որբ՝ ըլլալ...:

Եթէ փոփոխին կատարական գործի, կամ ուրիշ ու եւ է պաշտօնէութեան մէջ մտնել պէտք եղած ուսումը առած չեն:

Պարոն Քիւրքճեանի, ինչպէս նաեւ տեղւոյս Առաջնորդ եւ Տնօրէն ժողովոյ նախագահ Հայր-Սուրբին միակ երազն ու փոփոքն է բարձրացնել ուսման ծրագրին մակարդակը. աւելի հիմնական սկզբունքներով մշակել սալ սղաջոյց արուեստը՝ մինչեւ ի կատարելութիւն:

Սակայն ինչպէս կարելի է աս, քանի որ նիւթական միջոցները կը պակսին...: Շատ տեղեր ըսած, գրած ու կրկնած եմ թէ՛ առանց նիւթականի՝ բարոյականը երբեք կրնայ իր ուրոջ բարձրութեանը հասնիլ: Օգնէ՛ք ուրեմն, Որբանոցին, մեր կարողութեան ներած չափով, եթէ կ'ուզենք որ հոն պատասպարուած որբերը, մեր ալ եղբայրներն ու զաւակները, օր մը կրնան կեանքի մէջ ամեն կողմերով կատարեալ մարդիկներ գոյութիւն գտնեն:

Կրթարան-Որբանոցի եւ Ազգ. վարժարաններու մէջ կը գաստիտուէ, տեղւոյս ստաջնորդ, Արժ. Պետրոս վարդապետ Սարաճեան, Երուսաղէմայ միտքաբարձներէն:

Երիտասարդ վարդապետը խելացի, գործունէ, աշխոյժ ու եռանդուն եկեղեցական մէջ կը հաննի ամենուէն ամէն եւ ամէն տեղ: Կիպրոս իր տեղը չ'է սակայն: Գործունէ այս աշխոյժ, բնաւորութիւններու համար կեանք ու սպարեզ չ'կայ հոս:

Որպէսզի արդիւնաւոր ըլլան իր ջանքերն եւ օգտակար իր աշխատութիւնները, Կիպրոսի համակրելի առաջնորդին աւելի՛ յարմար են այնպիսի երկիրներ՝ յորս գործունէութեան լայն սպարեզ կայ: Այդ կողմերը գտնէ խոսքն երկրի վրայ սերմ ցանած չ'ըլլար...:

Կիպրոս (Նիկոսիա) ՄՍՈՒ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՏԻՎԸ. — Կ. Ք. Խաղիվը Լոնտոնէն մեկնելէ յառաջ, առաջարկեց արարողագրական Հասան փաշայ Ասլովի՝ մասնաւոր նամակաւ մը իր մօտ հրաւիրել Մուսթաֆա փաշայ-էլ-Արապի թուրք Հասան պէյ-էլ-Արապը:

Հասան պէյ-էլ-Արապի իմաց արուած էր նաեւ իրեն հետ բերել այն բոլոր երկրաստարդները՝ որոնք Անգղիոյ մէջ իրենց ուսումը կ'ստանան:

Ըստ այնմ հետեւեալ երիտասարդները Կ. Ք., Խաղիվին ներկայանալու պատիւն ունեցան:

Հասան Պէյ-էլ-Արապ, Կ. Ք. Թիկ-նապահ Ազաթիւ Հալիմ՝ փաշայ Ասլովի որդին Շէյխ Ապտիւլ Հալիմ՝ Հիւսէյին Պէյ Ասլով, Հասան Բամատան, Մահմաճեա-էլ-Սայիա, Մահմաճեա Թիմուր եւ Էթլաթտին բոլոր այս երիտասարդները Պիւքիտիկամ պալատին մէջ ընդունուեցան:

Կ. Ք. Խաղիվ սիրալիկ հոգածութեամբ մը իւրաքանչիւրը մի առ մի հարցափորձեց,

եւ խրատեց զանոնք իրենց ստացած ուսման ամենամեծ եռանդով եւ անխնայ յարատեւութեամբ հոգ տանիլ. միմիայն սա գաղափարին ծառայելով թէ իրենց ընդունած հմտութիւնները բարոյական յաղթութիւն մէ իրենց հայրենեաց: Կ. Ք. Խաղիվի սայն կարճ բանախօսութիւնը արարեբէն լեզուաւտեղի ունեցաւ:

— Հակառակ շրջած այլ եւ այլ զրոյցներուն Խաղիվը Տիվօն չի բնակիր, Կ. Քարճութիւնը ժընէվի մօտ Իշխան Եուրուստօֆին ամարանոցը վարձած է ուր հաստատուած է իւր հետեւորդներով եւ ամեն օր Տիվօն կ'երթայ բաղնիքները մտնալու համար:

ԱՂԲԱՏԻՆ ԼՈՒՄԱՆ. — Պապ-էլ-Շէհրիէ բնակող Հայ երիտասարդ մը Արշալոյսի 88 երորդ թուոյն մէջ հրատարակեալ «Հաստատան եւ Որբերը» վերնագրով յօդուածը կարգաւոր գգածուերէ. եւ ինչպէս կ'երեւի ձեռնհասութիւն չ'ունենալով միայն քառասուն փարայ ողջ դրամ տուեր է թերթը ընթերցող պզգայնոյն, որ առանց իւր անունը յայտնելու յանձնէ որբայնամին:

Առ այս Գրիտասոսի գանձանակին նմանութեամբ կ'ըսենք, այս երիտասարդը Որբայնամին գանձանակը լեցուց, Աստուած ալ իր քսակը լեցնէ որ իւր հայրենատիրական զգացմամբ կարող ըլլայ հայ աղքատին գանձանակը գործնականապէս լեցնելու:

ՍՈՒՏԱՆԻ ՄՍԲԱՍՏՈՒՐԲԸ. — Սուտանի կառավարութիւնը մտադիր է Իտալիոյ հետ մարտական պարմանագրութիւն մը կնքել, Կարմիր ծովուն վրայ գտնուող իտալական գաղթականութիւնէն եկած սպարներն համար. այնպէս որ մարտասուրբերը 8 առ 0)0 ը չի պիտի անցնին եւ Սուտանի կառավարութիւնը իտալական գաղթականներուն արտագրութիւններէն 5 առ 0)0 միայն առնելու իշաւունքը պիտի ունենայ:

Սուտանի մէջ արտօնուած է ծխախոտի ներածութիւնը այն պայմաններով ինչպէս Եգիպտոսի մէջ ի գործ կը դրուին. գալով աղին եւ ալքոլ պարունակող բնութեաց, կառավարութիւնը առ այժմ ասոնց մուտքը բացարձակապէս արգիլած է:

Սուտանի կառավարութիւնը բացարձակապէս արգիլած է իւր երկրին մէջ վիճակահանութեանց տօմսերու վաճառումները. կանոնադանցներն պիտի գասադարտուին 3 ալիքէն մինչեւ 3 տարի բանտարկութեան:

Հանրային պարտուց վարչութեան ստուակը, 62,000 ոսկի յատկացուցած է երկաթուղւոյ վաչուութեան, ճանապարհորդաց յատուկ 21 կառքեր գնելու համար. որոնց 4 ը առաջինն եւ մնացեալը երկրորդ կարգի պիտի ըլլան:

ՀԱՄԱՆՈՒՄԱԿՎԸ. — Պաշտօնական զեկուցագրին մէջ զէպրերու պարունակութեան թիւը 100 ի հասնելու համար, Բօր-Սայիտէն տեղացի մը խօլ գաղափար մը կունենայ ինքզինքը առողջապահական վարչութեան բժիշկներուն յանձնելով. որոնք անմիջապէս կը հաստատեն անոր ժանտախտէն վարակուած ըլլալը:

ԱՐՁԱՆՆԵՐՈՒ ՏԵՆԻԸ. — Ամսոյս 7 ին վերջացող շաբթուան մէջ Սուտանի աշխուհներուն մէջ ո'ն է գէպր չէ պատահած, հիմայ 49 կենդանիներ կան որ կը դարմանուին:

ՉՄԻԿԻՆԻՍԻՍ ԺԱՆՏԱՆՏԸ. — Մինչեւ մայիս 28 Չիւսուիոյ մէջ հաստատուած ժանտախտի դէպքերուն թիւը 14 ի կը բարձրանայ որոնց 3ը մահ է:

ՅՈՒԼԻՍ 14 Ի ՏՕՆԸ . — Աղէքսանդրիոյ Պրանսական գաղթականութիւնը ընդհանուր համակրանաց մէջ տօնեյ Յուլիս 14 Ի Աղգ. տօնին տարեգարձը : Գլխիկէ ահեն տեղեւ- ասագոյն գրօջակը կը ծածանէր. ոչ միայն հիւ- պատասարանները և կառավարական պալա- տը՝ այլ և շատ մը ֆրանսացի և Պրանսայի բարեկամներու . տուներ գրօջազարդուած էին :

Նոյն օրը ըստ սովորութեան Պրանսա- կան Հիւպատոսարանին մէջ ընդունելութիւն մը եղաւ : Պրանսական գաղթականութեան երեւելիները իրենց Փոխ-հիւպատոսին շուր- ջը հաւաքուած էին : Զերմագին բաժակ- ներ պարպուեցան ցուցահանդէսի յաջողու- թեան համար : Թրթուուն համակրանօք և հայրենասիրական զգացմամբ Պրանսական ազգին երեսփոխան Պ. Լուի Յիթ՝ առաջին անգամ խօսք առաւ, յառաջդիմութեան մայր և խաղաղութեան պաշտպան Պրանսայի փառքը և արհեստաւորներու, դիտութեան վաճառականութեան և ճարտարարուեստու- թեան խաղաղասէր յաղթութիւնը ներկայա- ցնող ցուցահանդէսին ճառագայթը փառա- տրեց :

Պ. Լուի Յիթի հայրենասիրական ճա- ուր ծափահարուեցաւ . որուն վերջաբանը նոյնպէս կեցցէներով ողջունուեցաւ :

Պրանսական հիւպատոս Պ. Հարիսմանտի պատասխանէն վերջ՝ ամեն մարդ բաժնուե- ցաւ հայրենասիրական նոր մաղթանքներ յորինելով և երեկոյան համար նուպար պարտէզը ժամագրութիւն տալով :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լծնորա 13 Յուլիս . — Ներկայ ամսոյս 11 ին գնդապետ Մահոն, զօրավար Յրէն- չի բանակին մէկ վաշտովը իւր խումբը զօ- րացուցած՝ Ռիֆօնթայի կից գտնուող Պօէրներուն բոլոր գիրքերը հզօրապէս գրաւեց :

Նեթրալութեքի պարտութիւնը առիթ կուտայ բազմաթիւ քննադատներու, Լօրտ Ռօպրթի բուն բանակատեղին մերձաու- րութեան վերագրելու համար :

Բարիզ 13 Յուլիս . — Շանկայի մէջ լուր կը շրջի թէ՛ Յուլիս 6 ին բոլոր Եւրոպա- ցիները շագուած են Բէքինի մէջ :

Այս լուրը ստուգութեան կը կարօտի :

Լծնորա 13 Յուլիս . — Փէքինի մէջ եւ- րոպացւոց շարդի մասին դարձեալ նարանոր զրոյցներ կը շրջին :

Եւրոպական տէրութիւնը և միացեալ նահանգները պաշտօնապէս մեծաքանակ վարձատրութիւններ խօստացած են՝ իրենց գեապանատուններուն հետ հազորակցու- թեան կարենալ մտնելու համար . բայց ց'արդ ո և է արգիւնք ստացած չ'են :

Ուալինկթըն 14 Յուլիս . — Շանկայէն քաշուած հեռագիր մը կ'ըսէ թէ՛ Շէնկ, հիւ- պատաններուն իմացուցեր է թէ՛ Փէքին գա- նուող օտարականները շարդուած են :

Կը պարսաւէ զօրավար Թիւնկ-Ֆիւ-Սի- անկը որ հակաստարական կուտակցութեան կը պատկանի և օտարականները բնաջինջը- նելու համար անգլիական գեապանատունը թնդանօթներով տապալելու հրաման տուած է :

Լոնտրա 14 Յուլիս . — Շանկայի Անգ- լիական հիւպատոսը կը հեռագրէ թէ՛ Փէ-

քինի մէջ գտնուող օտարականներուն միճա- կին վրայ շատ քիչ յոյս կայ :

Հում 14 Յուլիս . — Իտալիան 5,000 մարդ կը զրկէ Չինաստան . առաջին զօրա- բաժինը ամսոյս 18 ին պիտի մեկնի :

Բարիզ 15 Յուլիս . — Շանթունկի կա- կառավարիչը կը հեռագրէ թէ՛ Փէքինի գեա- պանատունները թշնամոյն ձեռքն ինկած են : Ահբողջ օտարականները շարդուած են : Լոնտրա 11 Յուլիս . — Ռազմաթերթ- ներու կատարեալ սպառումէն վերջ միայն գեապանատունները առնուեցան :

Բարիզ 16 Յուլիս . — Փէքինէն ս' և է պատճառական լուր չ'կայ : Յուլիս 13 ին գաշնակից ուժերը Թիէն-Չինի վրայ ըրած յարձակման մը մէջ անյաճող եղան . կու- րուստները 250 մարդ կը հաշուուին :

Լոնտրա 16 Յուլիս . — Վերլին լու- րերուն նայելով նախագահ Բիսկէր կը մերժէ անձնատուր ըլլալ, մինչև որ տա- լիքները և ռազմաթերթները չ'սպառին : Զօրավար Բլէրի միշտ թշնամիներուն հետ կուտի մէջ է :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ր Ա Ն Ս Վ Ա Ա Ս
Չինաստանի Մէջ ԱՊՏԱՄԲՈՒԻԻՆ Ռէյնիթ թերթը անպաշտօն ազգիւնէ կը տեղեկանայ թէ՛ գաղթային զինուորները որք Բլիւմբը գնդապետին հրամանին տակ կը գտնուին երեք անգամ ապստամբեր են : Չինուորները շատ դժգոհ են և կացութիւնն ալ խիստ ծանր է :

Պ Օ Է Ր Պ Ա Տ Գ Ա Մ Ա Ի Ո Ր Ն Ե Ր
Հավու և Բարիզ ծափահարեցին Հարաւ- Աֆրիկեան Հանրապետութեանց պատգա- մաւորները այսպիսի վեհանձն հիացմաւր, որով Պրանսայի ժողովուրդը գիտէ վարձա- րել պատուութեան համար կուտող դի- ցաղները :

Հավուի մէջ Պօէր պատգամաւորները մեծ ցոյցերու աւարկայ եղան վաճառա- կաններ, խանութպաններ . գործաւորներ բազմութեամբ կը հաւաքուէին իրենց կեց ցէներով ողջունելու համար ժողովուրդ մը որ չ'ուզէր մեռնիլ :

Աքիթէն շոգեհաւին մէջ պատգամա- ւորները ընդունուեցան :

« Պօէրներու անկախութեան համար » կազմուած գօմիթէին անդամներուն կող- մէ որոնց մէջ ակահաւոր անձնաւորու- թիւններ ալ կային : Բարափէն մինչև պանդոկը՝ ուր ի պատիւ պատգամաւորներու նախաճաշ մը պատրաս- տուած էր, Հավուի ժողովուրդը Չերմագին ծափահարեցին Պօէրները :

Նախաճաշէն վերջ ծերակոյտի փոխ- նախագահը ճառ մը արտասանեց՝ որով Պօէրներու անկախութեան համար կազ- մուած գօմիթէին նպատակը յայտնեց :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա
— Պօէրներու անկախութեան համար գերմանական գօմիթէն որուն կեդրոնն է Միւնիխ . 100,000 ստորագրութիւն հաւա- քեց, մինչդեռ Համպուրկի մէջ գտնուող միւնոյն գօմիթէին ճիւղը 125,900 ստո- րագրութիւն հաւաքեց :

Գօմիթէն Գերմանացւոց ուղղած ուր կուցմագրին մէջ կը ծանուցանէ թէ՛ 125,900

ստորագրութիւն պարունակող յայտարա- րութիւնը չեզոք պետութեանց և միւնոյն տուն Գերմանական կայսրութեան գլխա- նատան հազորդուած է :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

ԻՐԱՆԻ ԿԱՅՈՒԹԻՒՆ . — Յուլիս 5 թուա- կ սնու Շանկայի Ամերիկեան գեապանը կը հեռագրէ թէ կացութիւնը ծանր է : Ապս- տամբութիւնը կը տարածուի : Եթէ գաշնա- կից ուժերը հիւսիսային մասին մէջ պար- տութիւններ կրեն, Չինաստանի հարաւային և միջին մասերուն մէջ ապահովարար խը- ռովութիւններ պիտի ծագին : Ներքին մա- սերուն մէջ գտնուած օտարականները կամ պիտի շարդուին և կամ պիտի գլխատուին : Վաճառականութիւնը պիտի փճանայ, հիւ- սիսային մասին փոխարքաներուն պատկա- ռանք ազգելու և հարաւային մասին փոխ- արքաներուն օղնելու համար զօրաւոր բանակ մը պէտք է : Կ'երեւի թէ ամբողջ տէրու- թեանց հիւպատոսները նմանօրինակ հեռա- գիրներ ուղղած են իրենց կառավարու- թեանց :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

ՆԱԽՈՐԴ ՊԱՏՐԻԱՐԿԸ . — Կ. Պոլսէն Յու- նիս 21 թուականով կը հազորդուի թէ՛ նա- խորդ Պատրիարք Իզմիրեան Արքեպիսկո- պոսը երկու ամիսէ ի վեր բաւական ծանր հիւանդութեան մէջ է : Անգղացի բժիշկը երուսաղէմ հայոց վանքը երթալով կը խը- նամէ հիւանդը, որուն յանձնարարած է Եր- ուսաղէմի շրջակաները օգափոխութեան երթալ : Այս մասին կառավարութեան լուր տրուելով տեղին Բօմիսէրը այցելած է վանք եղելութիւնը ստուգած է, բայց տեղափո- խութեան արածութիւնը չէ տուեր, մինչև Յունիս 21 Պոլիս հասած լուրերուն հա- մեմատ : ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Թ Ղ Ք Ա Բ Ե Ր

Բարեզ 2 Յուլիս 1900

ՊՕԷՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ . — Պօէրներու ան- կախութեան համար կազմակերպուած յանձ- նախուժը որ իւր կեդրոնատեղին ընտրած է Բարիզի Թէթպու փողոցը, իւր գիւանդ րնորեց հետեւեալ կերպով :

ՆԱԽԱԳԱՀ . Պ. Փօլեա՝ ծեր սկուտական : ԻԵՐ-ՆԱԽ . Պ. Պ. Քրանց՝ նախկին նախա- րար, այժմ՝ երեսփոխան . Ռամպօ՝ նախկին նախարար ակադեմիական և ծերակուտական . Է . Կէռէն՝ նախկին մինիստր և ծերակու- տական . Գառօն՝ Բարիզի թաղապետու- թեան անդամ :

ԸՆԻՉ . ԲԱՐՏՈՒՂԱՐ . Պ. Ֆլէօրի-Ռափին երեսփոխան Ռոնի :

ՕԳՆԿ . ԲԱՐՏՈՒՂԱՐ . Պ. Միշէլ Սանսօն :

ԳԱՆՁԱՊԱՀ . Պ. Էակար Ռօլու :

Յանձնախումբը յետոյ շնորհակալ եղաւ անոնց, որոնք ինքնաբերաբար կուգան կը միանան իրենց :

Նա յայտարարեց թէ շատ մեծ տեղ մը պիտի տայ Պօէրներու ազատութեան գաղա- փարին արծարծուելու խնդրոյն, և միշտ յարարերութեան մէջ պիտի լինի, արդէն օտար երկիրներու մէջ կազմուած նոյնա- նպատակ մասնախումբերու հետ :

Միջազգային բարլամենդապական ժո- զովը որ տեղի պիտի ունենայ ի Բարիզ Յու- լիս 31 ին և ուր ներկայ պիտի գտնուին մի քանի հարիւր օտար երեսփոխաններ, խնդիրք պիտի ընդունի օրակարգի մէջ ան- ցնել Պօէրներու խնդիրը :

Առաջիկայ ուրբաթ օր Հավր պիտի հանին Ամերիկայէն Պօէր Հասարակապետութեանց պատուիրակները:

Միևնոյն ժամանակ ատնց հետ պիտի գայ նաև Պ. Պուրբ Քօլլըան՝ նախագահ ի նպատակ Պօէրներու Ամերիկեան մասնախմբին. այս անձնաւորութիւնը Յրանսա կուգայ նորակազմ Յրանսական մասնախմբին հետ բանակցելու:

Հանգանակութիւն բացուած լինելով կը լսենք թէ՛ Յրանսայի ամեն կողմերէն գրամ կ'ուղարկեն. քիչ օրէն այդ նուիրատուներուն անունները պիտի հրատարակեն. կ'ըսուի թէ՛ շատ գործաւորներ, արհեստաւորներ կան նուիրատուներուն մէջ, ինչպէս նաև հարուստներ, հասարակական գործիչներ, գիտնականներ, արդիւստներ, օրէնագէտներ, գրողներ, մէկ խօսքով բոլոր Յրանսայէ: Զարմանալի՝ Յրանսա. ինչե՛ր կը նէ եղեր երբ ուղէ...

Մ. Ս. ԴԱԻԻԻ ԲԷԿ

ՀԱՆԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աջակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածուէն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուիլ ուզողներն, կրնան գիմել՝ Արշարոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին:

Տիար Մ. Հայկունի Բարիզ ուղեւորելուն պատճառաւ, իւր հրատարակած «Վարագոյր Մարգկային Կենաց» գրքին սակաւթիւ օրինակներն յանձնած է Արշարոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ: Գնել փափաքողք կրնան հոն գիմել:

Գանի մը օրինակ մէկ անգամէն գնողին 20 առ հարիւր զեղջ կը լինի:

185րդ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԻՐԷՏԻ ՖՕՆՍԻՑԷ ԷԺԻԲՍԻԷՆԻ

15 Յուլիս 1900

Ա. պարզ կ'ֆրանք 100, 000. Թիւ 236, 671.

Հետեւեալք 1000 սկան ֆրանք կը յանին.

- 22517 44059 49260 51389 57599 69629
- 91340 93582 95322 195687 201770
- 226229 229908 232736 236600 250086
- 295218 302267 308583 309334 310115
- 358382 312362 313299 389217

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

2ՈՐԲԵՇԱՆԹԻ 15 ՅՈՒԼԻՍ 1900

6504	9542	2743	4340	2226	2664
8528	9464	4124	2319	7963	8456
2789	6610	121	3155	6956	1528
2532	1904	3044	5825	6372	8416
	1228	9435	883		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԸ

Օտնակիչի դեղատոմսի դիւնչի փողոցին մեջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարսեր, Երջարներսկաններ, Գիտեր, Հրախարսեր, Մանալիներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշդագահութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ.

ԿՈՊԵՌՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ.

ՆՈՐ ԼՈՒՍՆԱԿԱՐԶԱՏՈՒՆ ԵՒ ՆԻԱՐԶԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլահ էղբարց տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզյեֆիյէ Եարիս Գաւմէջ Օթէլ ՇէֆէրՏՍԻ ճիշտ գիմաց թիւ 3 արարթըմանին կրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրուր կառուիներ ի հարկին:

Ակրանճիւման բնական մեծութեամբ և կենդանագիրներամերիկեան մեքենայով սրունք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միևնաբար:

Իւզաներկ եւ ջրաներկ պատկերներ և շինարարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ոչքոչ, ճեպերքըման եւ շինարարի գիմաց յանձնարարութիւններն անհաւաք և շինարարութեան մէջ միւլեար աւելի է:

Մ. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իրանի:

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ
Կ Ե Ն Ա Ց Ա Պ Ա Յ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպատակ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ ուր և է ընկերութեան մէկ միլեար աւելի է:

Մ. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իրանի:

ՏՕՔԹ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԷՅԱՆ

Ի Եարես Գրք-Պէյ, քիւ 20

Իր 2րդ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե.) 9էն 11 սրոյած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղղող աղքատ հիւանդներու:

Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա

Տիրան Կոստանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ Հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փաղար-Մրուրի խանութին մէջ պատրաստել Նէմէնի սորճին սալեանաւոր և անխաղախ տեսակէն իրեն գիմաց յանձնարարներ օրան 16 զրը ողջի հաշուով, զուտ ֆաէէ պիտի կրնան գնել. կը լուս մէջ ալ ուղղամութիւն գտնելով:

Գ Ք Ք Ք Ո Ր Ձ Ո Ն Ն Ե Ր Ո Ր Ն

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իստական, Դպրոցական, Գիտական, Իրական Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նաւասարգեանի, Գալստեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԵԱՐՈՅԺ

Ապսիւ Եարս Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար բնորոշ ապրանքներով կեղծ սկուաներ:

Կը գազրեցնէ վայրկենապէս սկուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած սկուաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի գարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3—5:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ ուր և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

Ա.Լ.ԳՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յ'Ազեքսանգրիա: